



**ՀԱՅԱՐԱՍՅԱԿԻ
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ
ՀԻՄՆԱԳՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ**

**ՇԱՀԱԳՐԳԻՌ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Սեպտեմբերի 5, 2008, Կոնգրես հյուրանոց

Ժողովի բացում.

Բացման խոսքով հանդես եկավ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Գլխավոր Գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը (Բացման ուղերձը կցվում է): Ա. Հովսեփյանը ներկայացրեց շահագրգիռ կազմակերպությունների ընդհանուր ժողովի հրավիրման հիմնական դրդապատճառները և ակնկալվող արդյունքները:

Իր խոսքում Ա. Հովսեփյանը ներկայացրեց նաև ՀՄՀ-Հայաստան ծրագրի շրջանակներում իրականացված հիմնական աշխատանքները, կարևոր ձեռքբերումները, ինչպես նաև առկա հիմնախնդիրները:

ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի տնօրենը, կարևորելով Շահառուների խորհրդի դերը ծրագրի արդյունավետ կառավարման և իրականացման գործում, իր շնորհակալական խոսքն ուղղեց ՇԽ երկրորդ կազմին, որի պարտականություններն ավարտվում են 2008թ. սեպտեմբերի 29-ին:

Այնուհետև, առաջարկեց սկսել նիստի պաշտոնական մասը և ընտրել նախագահող:

Քվեարկության մանդատներ ստացած մասնակիցների թիվը 145 էր: Մասնակիցների կազմը կցվում է:

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ.

Ժողովի նախագահողի և հաշվիչ հանձնաժողովի ընտրություն

Նիստը նախագահելու համար առաջարկվեց ՇԽ անդամ, «Ագրոգարգացում» ՀԿ նախագահ Աշոտ Ոսկանյանի թեկնածությունը:

Քվեարկության արդյունքում միաձայն հաստատվեց Ա. Ոսկանյանի թեկնածությունը՝ ժողովը նախագահելու համար:

Նախագահողն առաջարկեց հաստատել օրակարգը:

Օրակարգը հաստատվեց միաձայն:

Նախագահողը առաջարկեց որոշել հաշվիչ հանձնաժողովի կառուցվածքը և ընտրել հաշվիչ հանձնաժողովի կազմը:

Քննարկման արդյունքում որոշվեց հաշվիչ հանձնաժողովի կազմում ընդգրկել 5 ներկայացուցիչների:

Առաջարկեցին հետևյալ թեկնածությունները՝

1. Լալա Մարկոսյան, «Գեղարքունիքի մարզի ՀԿ կենտրոն» ՀԿ
2. Մեյրան Սարգսյան, Խոյ ՁՕԸ
3. Արթուր Մնացականյան, Ամբերդ ՁՕԸ
4. Աշոտ Գևորգյան, Արաքս ՁՕԸ
5. Իրինա Օհանյան, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի թարգմանչուհի

Առաջադրված թեկնածությունները հաստատվեցին միաձայն: Հաշվիչ հանձնաժողովն իր կազմից նախագահող ընտրեց Լալա Մարկոսյանին:

ՈՐՈՇՈՒՄ` Ընտրվեցին Շահագրգիռ կազմակերպությունների ընդհանուր ժողովի նախագահը՝ ի դեմս Ա. Ոսկանյանի և հաշվիչ հանձնաժողովի կազմը՝ ի դեմս Լալա Մարկոսյանի, Մեյրան Սարգսյանի, Արթուր Մնացականյանի, Աշոտ Գևորգյանի և Իրինա Օհանյանի:

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ.

ՇԽ անդամների թափուր տեղերի ընտրության Կարգի նախագծի ներկայացում, քննարկում և հաստատում

ՇԽ անդամների ընտրության Կարգի վերաբերյալ հանդես եկավ նախագահող Ա. Ոսկանյանը: Նա նշեց, որ Կարգի նախագիծը, ընդհանուր առմամբ, կրկնում է նախորդ տարվա Կարգի հիմնական դրույթները: Այս տարբերակում տեղ գտած կարևոր կետերը բազմիցս քննարկվել են ՇԽ-ում և քաղաքացիական հասարակության հետքրքրված այլ կողմերի մասնակցությամբ:

Ընտրակարգի նախագիծը ներկայացնելու նպատակով ձայնը տրվեց ՇԽ օգնական Վ. Գրիգորյանին:

Ջեկուցող Վ. Գրիգորյանը ներկայացրեց Կարգի նախագծի հիմնական դրույթները՝ շեշտարում կատարելով տեղ գտած փոփոխությունների և նոր առաջարկությունների վրա:

Կարգի նախագծի վերաբերյալ ժողովի մասնակիցները ներկայացրեցին հետևյալ հիմնական առաջարկությունները (դրանց շուրջ տեղի ունեցած քվեարկության արդյունքները նույնպես ներկայացվում են) և հարցերը՝

1. Կարգում ունենալ ռոտացիայի սկզբունքը, համաձայն որի քաղաքացիական հասարակության յուրաքանչյուր անդամ կարող է ընտրվել որպես ՇԽ անդամ մեկ անգամ՝ Արտեմիս Լեփեջյան («Սուրբ Սանդուխտ Տիկնանց Միություն» ՀԿ): Այս առաջարկությունը պաշտպանեցին նաև Սարգիս Մեղրակյանը («Ֆերմերային շարժում» ՀԿ) և Հրանտ Մարգարյանը («Թոշակառուների հայկական միավորում» ՀԿ):

Վերոնշյալ առաջարկության վերաբերյալ հանդես եկավ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի տնօրեն Արա Հովսեփյանը. նա նշեց, որ այս առաջարկությունը հակասություն է

առաջացնում ՀՄՀ-Հայաստան ծրագրի շուրջ կնքված միջպետական Կառավարման Համաձայնագրի 3.1 հոդվածի (դ) կետին, որի համաձայն «Շահառուների խորհրդի անդամները պաշտոնավարում են մեկ (1) տարի ժամկետով, պայմանով որ կարող են վերընտրվել»:

Այս առիթով հանդես եկավ ժողովի մասնակից Աբգար Եղոյանը («Սպառողների իրավունքների պաշտպանություն ՀԿ») և նշեց, որ եթե օրենքի սահմաններում հնարավոր չի կարգավորել այդ հարցը, ապա դիմել ՇԽ-ին առաջարկությամբ, խնդրանքով դրսևորել բարի կամք և ձեռնպահ մնալ իրենց թեկնածության առաջադրումից:

«Մեծանտ» ՀԿ ներկայացուցիչ Վ. Ասրյանն առաջարկեց ՇԽ պաշտոնավարելու իրավունքը ձևակերպել հետևյալ կերպ՝ «ՇԽ անդամը ունի ոչ անընդմեջ ընտրվելու իրավունք», որի չի հակասի համապատասխան Պայամանագրին: ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի ԳԳՏ Ա. Հովսեփյանն առաջարկեց հանդիպումից հետո մանրակրկիտ ուսումնասիրել Վ. Ասրյանի կողմից ներկայացված առաջարկությունը ՀՄՀ-Հայաստանի իրավաբանների մասնակցությամբ, և տալ համապատասխան որոշում:

1. Վերանայել ընտրակարգի 4.1 կետը համաձայն որի յուրաքանչյուր մասնակից ունի 5 թեկնածուների օգտին քվեարկելու իրավունք և փոխարինել դա 2-ով՝ Ս. Սեդրակյան («Ֆերմերային շարժում» ՀԿ):

Քվեարկության պահին ներկա էին 131 մասնակից:

Առաջարկությանը կողմ քվեարկեցին 12 մասնակից, դեմ՝ 115, ձեռնպահ՝ 4: Չայների պարզ մեծամասնությամբ առաջարկությունը մերժվեց:

2. Քվեարկության իրավունքը փոխարինել 3-ով (5-ի փոխարեն)՝ Վ. Գալստյան: («Ֆերմերների և կաշվեգործների գյուղացիական միություն» ՀԿ):

Քվեարկության պահին ներկա էին 131 մասնակից:

Առաջարկությանը կողմ քվեարկեցին 34 մասնակից, դեմ՝ 95, ձեռնպահ՝ 2: Չայների պարզ մեծամասնությամբ առաջարկությունը մերժվեց:

3. Թողնել ՇԽ անդամների ընտրակարգի 4.1 կետը այնպես, ինչպես, որ կա՝ 5 մասնակցի օգտին քվեարկելու իրավունքով:

Քվեարկության պահին ներկա էին 131 մասնակից:

Առաջարկությանը կողմ քվեարկեցին 103 մասնակից, դեմ՝ 18, ձեռնպահ՝ 7: Չայների պարզ մեծամասնությամբ առաջարկությունը հաստատվեց:

4. Քանի որ այլ առաջարկություններ չեղան, նիստի նախագահողն առաջարկեց հաստատել ՇԽ անդամների ընտրակարգի ներկայացված նախագիծը՝ ներառյալ կից հավելվածները (ընտրությունների մասնակցության հայտը և քվեաթերթիկի օրինակը):

Քվեարկության պահին ներկա էին 131 մասնակից:

Առաջարկությանը կողմ քվեարկեցին 127 մասնակից, դեմ՝ 3, ձեռնպահ՝ 1: Չայների պարզ մեծամասնությամբ առաջարկությունը հաստատվեց:

ՈՐՈՇՈՒՄ. Հաստատվեց ՇԽ անդամների ընտրության կարգը:

Օրակարգի երրորդ հարցի վերբերյալ.

Ընտրական հանձնաժողովի ընտրություն

Ժողովի նախագահող Ա. Ոսկանյանն առաջարկեց ներկայացնել թեկնածություններ ընտրական հանձնաժողովի կազմում ընդգրկվելու նպատակով, ընդհանուր առմամբ 7 անդամներ:

Առաջադրվեցին 13 թեկնածություններ, ինչի կապակցությամբ նախագահողն առաջարկեց անցկացնել քվեարկություն՝ հաշվելով միայն կողմ ձայները: Հանդիպման մասնակիցները համաձայնեցին: Ստորև ներկայացվում են ընտրական հանձնաժողովի թեկնածուների կազմը, իրենց կողմից ներկայացվող կազմակերպությունները, մարզը և հավաքած կողմ քվեների թիվը՝

N	Անուն	Կազմակերպություն	Մարզ	Հավաքած կողմ քվեներ
1	Հոմերոս Սաֆարյան	Վարդենիս ՋՕԸ	Գեղարքունիկ	97
2	Գենիկ Մովսիսյան	«Էկոգեն» ՀԿ	Արարատ	89
3	Արտեմիս Լեփեջյան	«Սուրբ Սանդուխտ Տիկնանց Միություն» ՀԿ	Երևան	91
4	Արայիկ Մակարյան	«Գործատուների հանրապետական միություն» ՀԿ	Երևան	33
5	Հրահատ Հայրապետյան	Քասախ ՋՕԸ	Արագածոտն	70
6	Վարուժան Սաֆարյան	Ջրվեժ-Չորաղբյուր ՋՕԸ	Կոտայք	70
7	Էդուարդ Կիրակոսյան	«Տաքսի ծառայությունների միություն» ՀԿ	Երևան	13
8	Նարինե Սարգսյան	«Ապագան քոնն է» ՀԿ	Երևան	65
9	Հրաչյա Պետրոսյան	«Հայ պետ. ծառայողների միություն» ՀԿ	Երևան	52
10	Վահագն Ասրյան	«Սեմանտ» ՀԿ	Արագածոտն	85
11	Զոհրաբ Շահինյան	«Շահեն» ՀԿ	Գեղարքունիկ	39
12	Գայանե Արսենյան	«ՄԱԿ-ի հայկական ասոցիացիա» ՀԿ	Երևան	63

13	Ալինա Լալայան	«Արարատի մարզի կանաչներ» ՀԿ	Արարատ	89
----	---------------	--------------------------------	--------	----

Այսպիսով, ձայների պարզ մեծամասնությամբ հետևյալ թեկնածությունները հաստատվեցին որպես ընտրական հանձնաժողովի անդամներ՝

1. Հոմերոս Սաֆարյան, Վարդենիս ՋՕԸ, Գեղարքունիկի մարզ
2. Գենիկ Մովսիսյան, «Էկոգեն» ՀԿ, Արարատ մարզ
3. Արտեմիս Լեփեջյան, «Սուրբ Սանդուխտ Տիկնանց Միություն» ՀԿ, Երևան
4. Հրահատ Հայրապետյան, Քասախ ՋՕԸ, Արագածոտն մարզ
5. Վարուժան Սաֆարյան, Ջրվեժ-Չորադրյուր ՋՕՕԸ» Կոտայքի մարզ
6. Վահագն Ասրյան, «Մեմանտ» ՀԿ, Արագածոտնի մարզ
7. Ալինա Լալայան, «Արարատի մարզի կանաչներ» ՀԿ, Արարատի մարզ

Ժողովի փակում.

Վերջում նախագահող Ա. Ոսկանյանը բոլորին մաղթեց հաջողություն և նիստը հայտարարեց փակված:

Նախագահող՝ Ա. Ոսկանյան

Նիստն արձանագրեց ՇԽ օգնական Վ. Գրիգորյանը:

5-ը սեպտեմբերի, 2008, Երևան